

ինչ որտմնացաւութիւն՝ ներեսցէ յայսմ՝ մասի միամիտ սխալանացս, եւ ահա ի վերագոյնդ գրոյս իժով գրչաւ՝ եւ իւր ձեռացն ստորագրութեամբ գրեաց գիր սիրոյ, զոր ընկալեալ ըստ գրեցելոյն կատարեսցես. եւ մանաւանդ զյատուել գիրն առ Վասպարն մի՛ գանց առնուցուս, եւ գառ այլս պարզ օրհնառաք ողջոյնդ. որոց օրրստօրէ բորբոքի հուր կարօտիդ, որ եւս առաւել հրգեհի անյիշաչարութեամբդ: Այլ եւ մեծ Պետրոս ամիրայն ընկալեալ զգիրդ՝ արտասուօք գրել ետ զառքեց գիրն որ ընդ գրոյս, եւ կարի ըղձագին հաւատով ցանկսյ քեզ, խնդրէ եւս միշտ ի քէն զգիր օրհնութեանդ, եւ յանձնեաց ինձ գրել առ քեզ, որ զիսկական կենդանագիրն հաւաստի նմանութեան Պետրոսի Ախին հաւատոյ ներհուն ճարտար պատկերահանի միոյ գեղագրել տացես, եւ յամենայնի գուարձալի տեսաւորութեան պարագայիւք յարգարեալ առաքեսցես, եւ զգինն վճարէ սրբան եւ լինիցի՝ գուցէ նուիրանօք. եւ կարող է գտանել ձեռն քո զհրաշալի մասն ինչ նշխարաց Պետրոսի առաքելոյ, եւ առաքեալ առ նոյն միամիտ լի հաւատով եւ բղձիւ մեծաւ խնդրօղ Պետրոս մեծ ամիրայն վերագրեալ, որ ոչ լինի ըստ միւս սեւաչէին Պետրոսի նուիրանացդ զղջալ քեզ ի վերջոյ: Իսկ եւ Մարտիրոս եւ մահտեսի Յակոբ Հովուեան ամիրայքն եւս յոյժ կարօտանօք գրել ետուն առ քեզ գիր սիրոյ, զոր ընկալնուս ընդ գրոյս. որոցն գործոց յաւուրս յայտոսիկ յաջողեցաւ քանի մի մեծամեծ ուրախալի իբք. նոցա եւս գիր սիրոյ օրհնութեան գրել մի գանդաղեցիս: Նաեւ ընդ առաջին գրոյդ գրեսցես առ իս զորպիսութիւն տրամագրութեան զյօհաննէս քարոյ սարկաւագէ, որ ըստ կանոնիդ պատրաստ է շարժիլ՝ որպէս եւ գրես: Արդ Սամուէլ վարդապետն ի նոյեմբերի 7ին եկն ի Պրուսայու, եւ ըստ քոյդ է եղանակ գալստեան նորին